ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ. ՊԱՏՄԱԲԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
(ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Վարուժան Պողոսեան

Խորհրդային պատմաբանների ներդրման նշանակութիւնը Ֆրանսիայի պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում գերագնահատելու հարկն ամենեւին չկայ: Խորհրդային պատմագրութիւնն ի սկզբանէ դրսեւորել է անթաքոյց հետաքրքրութիւն, մասնաւորապէս՝ Ֆրանսիայի նոր դարի պատմութեան նկատմամբ՝ եւ իր անգնահատելի աւանդը ներդրել XVIII-XIX դարերի ֆրանսիական յեղափոխութիւնների, սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների զարգացման եւ հասարակական մտքի պատմութեան առանցքային հիմնախնդիրների քննական վերլուծութեան բնագաւառներում: Այն առաջադրել է մեծ թուով աշխարհահռչակ պատմաբանների փայլուն մի աստղաբոյլ, որի ներդրումը Ֆրանսիայի պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում բարձր գնահատականի է արժանացել միջազգային պատմագիտական շրջանակներում:

Ակադեմիկոսներ Նիկոլայ Լուկինը (1885-1940) եւ Վեաչեսլաւ Վոլգինը (1879-1962) 1920-ական թուականներից ի վեր ձեռնամուխ են եղել խորհրդային պատմաբանների առաջին սերնդի կրթութեանը՝ դառնալով մարքսիստական պատմագիտական դպրոցի հիմնադիրները, որի ներկայացուցիչներից շատերը հետագայում դարձան ռուսական դպրոցի գործի ջահակիրը եւ նուաճեցին պատմագիտական Օլիմպոսի բարձունքները: 1960-70-ական թուականներին միջազգային լայն ճանաչման էին արժանացել Ֆրանսիայի պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում մեծ աւանդ ներդրած այնպիսի հեղինակաւոր պատմաբաններ, ինչպիսիք են՝ Ալբերտ Մանֆրեդը, Բորիս Պորշնեւը, Վիկտոր Դալինը, Թեոդոր Պոտեմկինը, որոնցից շատերի հիմնարար աշխատութիւնները պարբերաբար թարգմանուել են տարբեր լեզուների՝ ապահովելով նրանց համար պատուաւոր տեղ համաշխարհային պատմագիտութեան ասպարէզում: Նրանց թւում էր նաեւ ակադեմիկոս Վոլգինի սան, ականաւոր պատմաբան Աբգար Յովհաննիսեանը:

Խորհրդային եւ հայրենական պատմագիտական միջօրէականներում խոր հետք թողած ակադեմիկոս Աբգար Ռուբէնի Յովհաննիսեանի (1908-1991) անունը քաջ յայտնի է մեր հանրապետութեան շրջանակներից դուրս: Նա ծնուել է 1908 թ. մայիսի 30-ին Թիֆլիսում՝ իրաւաբանի ընտանիքում: Նրա պապը՝ Աբգար Յարութիւնի Յովհաննիսեանը (1849-1904), եղել է անուանի հրապարակախօս, լրագրող եւ հասարակական գործիչ, գլխաւորել ազգային-պահպանողական հոսանքը XIX դ. վերջին քառորդում, 1876-1881 թթ. եւ 1882-1898 թթ. խմբագրել համապատասխանաբար՝ Փորձ եւ Արձագանգ պարբերականները[1]:

Գիտական մկրտութիւնը ստանալով 1920-30-ական թուականներին՝ Ա. Յովհաննիսեանն աւելի քան կէս դար խորհրդային պատմագրութեան անդաստանը հարստացրել է ոչ միայն XVIII-XIX դարերի ֆրանսիական հասարակական մտքի, այլեւ XVIII դարում հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմութեան առանցքային հիմնահարցերին նուիրուած մեծարժէք գիտական աշխատութիւններով, որոնք նրա անունը փառքով են պսակել խորհրդային եւ համաշխարհային պատմագրութեան երկնակամարում: Զափազանցրած չենք լինի, եթէ հաւաստենք, որ հայ ժողովրդի նոր դարի պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում նա ոչ միայն Լէօի, ակադեմիկոսներ Աշոտ Յովհաննիսեանի եւ Մկրտիչ Ներսիսեանի հետ մէկտեղ XX դարի հայրենական պատմագրութեան չորս գագաթներից էր, այլեւ միաժամանակ խորհրդային պատմագրութեան սիւներից:

XVIII-XIX դարերի ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի եւ սոցիալիզմի պատմութեանը նուիրուած Ա. Յովհաննիսեանի ուսումնասիրութիւնները բարձր են գնահատել թէ՛ խորհրդային եւ թէ՛ արտասահմանեան պատմաբանները, որոնք պարբերաբար դրանք արժեւորել են պատմագիտական տարբեր հեղինակաւոր պարբերականներում տպագրուած գրախօսութիւններում եւ ֆրանսիական հասարակական մտքի պատմութեան ուսումնասիրութեան վերլուծութեանը նուիրուած աշխատութիւններում[2]: Պատմաբանի լաւագոյն՝ «Կոմունիստական գաղափարները Ֆրանսիական մեծ յեղափոխութեան տարիներին» մենագրութիւնը[3] 1974 թ. արժանացել է նրա ուսուցչի՝ ակադեմիկոս Վոլգինի անուան՝ ԽՍՀՄ ԳԱ սահմանուած մրցանակի: Երկար տարիներ Ա. Յովհաննիսեանը միջազգային գիտաժողովներում ներկայացրել է խորհրդային պատմագիտութիւնը, նաեւ գլխաւորել խորհրդային պատմաբանների պատուիրակութիւնները: Այս յետնախորքի վրայ առաւել եւս, նպատակայարմար ենք գտնում ստորեւ ուշադրութիւնը կենտրոնացնել սոսկ նրա՝ իբրեւ պատմաբանի դիմագծի վրայ:

Ա. Յովհաննիսեանի ուսումնառութիւնը եւ գիտական դաստիարակութիւնը համընկել են ԽՍՀՄ-ում մարքսիստական պատմական գիտութեան ձեւաւորման բարդ ժամանակաշրջանին: Պատմագիտական մտքի զարգացման այս նոր փուլը, որը թեւակոխում էին նորաստեղծ խորհրդային պետութեան պատմաբանները, նրանց առաջադրում էր միանգամայն նոր պահանջներ: Մենք հակուած չենք հաւաստելու, թէ 1920-30-ական թուականներին մարքսիստական պատմական գիտութեան կայացումը յանգեցրել է միանշանակօրէն դրական արդիւնքների: Խորհրդային պատմագիտական մարքսիստական դպրոցի ինքնահաստատման գործընթացը ոչ միայն ճանապարհ է հարթել խիստ կարեւոր կտրուածքով՝ սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների յենքի վրայ պատմական անցեալի խոր ուսումնասիրութեան համար, այլեւ միաժամանակ մեծապէս խոչընդոտել է պատմագիտական մտքի անկաշկանդ զարգացմանը, քանզի դրա՝ մարքսիստական մեթոդոլոգիայի միահե-

---

1 Այդ մասին տե՛ս **Մ. Հ. Մխիթարեան**, *XIX դարի երկրորդ կէսի արեւելահայ պարբերական մամուլի պատմութիւնից* («Փորձ», «Արձագանգ»), Եր., 1976:

2 **В. А. Дунаевский, Б. Ф. Поршнев**, *Изучение западноевропейского утопического социализма в советской историографии (1917-1963)*, "История социалистических учений. Памяти академика В. П. Волгина", М., 1964, ст. 34, 42-44, 55-56, 59; **В. А. Дунаевский, Г. С. Кучеренко**, *Западноевропейский утопический социализм в работах советских историков*, М., 1981, ст. 49-50, 58-61, 73-74, 77-78, 122-127; **В. М. Далин**, *Историки Франции XIX-XX веков*, М., 1981, ст. 159-160, 280. Նշենք, որ Ա. Յովհաննիսեանի արխիւում պահպանուել են ակադեմիկոսներ Ե. Տարլէի, Վ. Վոլգինի, Ն. Դրուժինինի, պրոֆեսորներ Ա. Մանֆրեդի, Վ. Դալինի եւ այլոց խիստ դրական, առ այսօր չհրապարակուած կարծիքները նրա տարբեր գրքերի կամ գրքերի ձեռագրերի մասին. տե՛ս ՀՀ Ազգային արխիւ, ֆ. 1169 (Ա. Ռ. Յովհաննիսեանի), ց. 1, գ. 250, թ. 9-9 շրջ., 28. գ. 261, թ. 1-8. գ. 265, թ. 1-5. գ. 266, թ. 1-4:

3 **А. Р. Иоаннисян**, *Коммунистические идеи в годы Великой французской революции*, М., 1966; **A. Ioannissian**, *Les idées communistes pendant la Révolution française*, Moscou, 1984.

© National Library of Armenia

ծան տիրապետութեան հաստատման գերնպատակ հետապնդող առաջընթացն ուղեկցուել է անհարկի քաղաքականացուած ծայրայեղութիւններով: Այս պայմաններում մարքսիստ պատմաբանների առաջին սերնդի ներկայացուցիչները ոչ միայն նսեմացնում էին պատմագիտական ոչ մարքսիստական ուղղութիւնների դերն ու նշանակութիւնը, այլեւ երիտասարդական աւիւնով, յանիրաւի, անողոք պայքար էին մղում մարքսիզմն, իբրեւ մարդկային հասարակութեան պատմութեան մեկնաբանութեան միակ հնարաւոր մեթոդոլոգիայ, անվերապահօրէն չընդունող թէ՛ ռուսական պատմագրութեան կարկառուն ներկայացուցիչների (Նիկոլայ Կարէեւ, Եւգենի Տարլէ եւ այլք) եւ թէ՛ ֆրանսիացի հեղինակաւոր պատմաբանների (մասնաւորապէս՝ Ալբեր Մատյեզի) դէմ՝ չխորշելով անգամ նրանց վրայ բարդելուց ոչնչով չհիմնաւորուած քաղաքական մեղադրանքներ[4]:

Այսպիսով, անջրպետելով խորհրդային պատմական գիտութիւնը համաշխարհային պատմագիտական դաշտում տեղի ունեցող բոլոր շահեկան տեղաշարժերից եւ XX դարում պատմագիտական ոչ մարքսիստական մտքի աննախադէպ առաջընթացից, ինչն, անտարակոյս, մեթոդոլոգիական նոր մօտեցման առաւելութիւնների շարքում չի կարելի դասել՝ մարքսիստական խորհրդային գիտութիւնը դեռեւս իր խոյացման արշալոյսին նախանշել է այն հիմնական ոլորտները, որոնց վրայ հարկ էր գամել խորհրդային պատմաբանների ուշադրութիւնը: Դրանք յանգում էին սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների զարգացման, հասարակութեան, գլխաւորապէս՝ ձախ ուժերի գործունէութեան կտրուածքով քաղաքական պատմութեան եւ նրանց գաղափարախօսութեան ուսումնասիրութեանը, ինչը պայմանաւորուած էր մարքսիզմի հիմնական առանցքային հայեցակարգային դրոյթներից մէկով՝ դասակարգային պայքարի տեսութեամբ, ըստ որի՝ պատմութեան շարժիչ ուժը ժողովրդական զանգուածներն են:

Պատմաբանն, անտարակոյս, իր ժամանակի ներկայացուցիչն է: Ա. Յովհաննիսեանը չէր կարող բացառութիւն կազմել: Նրա գիտական գործունէութեանը բնորոշ են նոր ծնունդ առած մարքսիստական խորհրդային գիտութեան առանձնայատկութիւններից շատերը: Նախ՝ ինչպէս եւ իր սերնդակիցները, 1920-ական թուականներին, իբրեւ գիտական ուսումնասիրութիւնների հիմնական ոլորտ, նա ընտրել է խորհրդային պատմաբանի համար հնարաւոր՝ նշուած ուղղութիւններից մէկը, այն է՝ ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի պատմութիւնը, որի նկատմամբ նրա հետաքրքրութիւնը. ըստ իր իսկ հաւաստման, ծագել է դեռեւս ուսանողական տարիներին, երբ այսօր արդէն՝ ՀՀ Ազգային գրադարանում պահուող Ղորղանեանի անձնական ֆոնդում ծանօթացել է XVIII դարի ֆրանսիացի ուտոպիստ կոմունիստների երկերին:

1930-ական թուականներին Ա. Յովհաննիսեանի մուտքը պատմական գիտութեան ասպարէզ նշանաւորող առաջին գիտական աշխատութիւնները, որոնք դարձել են նրա ատենախօսութիւնների (համապատասխանաբար՝ 1935 թ. ԽՍՀՄ ԳԱ-ում եւ 1938 թ. Մոսկուայի պետական համալսարանում պաշտպանուած) յենքը, նուիրուած են եղել XVIII-XIX դարերի ֆրանսիացի նշանաւոր ուտոպիստ կոմունիստներ Ռետիֆ դը լա Բրետոնի եւ Շառլ Ֆուրիէ հայեացքների ուսումնասիրութեանը[5]: Դրանք հիմնուում էին բացառապէս տպագիր սկզբնաղբիւրների մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, ինչը միանգամայն համահունչ էր նոր ձեւաւորուող խորհրդային պատմական գիտութեան զարգացման ընդհանուր համայնապատկերին:

1920-40-ական թուականներին խորհրդային երիտասարդ պատմաբանները, խիստ ոգեւորուած բացառապէս մարքսիստական մեթոդոլոգիայի հիման վրայ պատմութեան մեկնաբանութեան անհրաժեշտութեամբ, որը, նրանց համոզմամբ, ապահովում էր իրենց անառարկելի դերազանցութիւնն արեւմտեան պատմագիտական ուղղութիւնների ներկայացուցիչների նկատմամբ, յաւուր պատշաճի ուշադրութիւն չէին դարձնում արխիւային փաստաթղթերի ուսումնասիրութեան վրայ: Նոյնիսկ այն սակաւաթիւ պատմաբանները, որոնց 1920-ական թուականներին հնարաւորութիւն էր ընձեռուել գիտական գործուղումների մեկնելու արտասահմանեան երկրներ, սահմանափակւում էին, այդուհանդերձ, գլխաւորապէս տպագիր սկզբնաղբիւրների ուսումնասիրութեամբ[6]: Ակնյայտ է, որ խօսքը տուեալ պարագայում վերաբերում է պատմագիտութեան ասպարէզ մուտք գործած մի ամբողջ սերնդի կոլեկտիւ հոգեբանութեանը:

Ամէն դէպքում, գիտական բարձր մակարդակ ունեցող առաջին իսկ աշխատութիւնների շնորհիւ Ա. Յովհաննիսեանը կարճ ժամանակամիջոցում իրաւամբ ձեռք է բերել հասուն եւ կայացած պատմաբանի համբաւ[7]: Այդ մասին է վկայում 1941 թ. ԽՍՀՄ ԳԱ Պատմութեան ինստիտուտի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի ղեկավարներից Ֆ. Պոտեմկինի՝ նրան ԽՍՀՄ ԳԱ համակարգում մշտական աշխատանքի հրաւիրելուն առնչուող առաջարկութիւնը, որը միտուած էր ինստիտուտի աշխատանքների մակարդակի բարձրացմանը[8]:

Փոխարէնը, 1940-50-ական թուականներին Ա. Յովհաննիսեանի՝ XVIII դ. հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմութեանը նուիրուած գրքերը խարսխւում էին խորհրդային արխիւներում պահուող վաւերագրերի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ[9]: Ըստ էութեան, չունենալով նախորդներ, նա առաջինն է յաւուր պատշաճի արժեւորել Յովսէփ Էմինի գործունէութիւնը[10] եւ Ռուսաստանի՝ 1780-ական թուականներին

---

4 Տե՛ս **Г. Зайдель, М. Цвибак**, *Классовый враг на историческом фронте*, М.-Л., 1931; *Полемика Альбера Матьеза с советскими историками. 1930-1931 гг.* Предисловие В. А. Дунаевского, "Новая и новейшая история", 1995, N 4, ст. 199-211.

5 Տե՛ս, օրինակ, **А. Р. Иоаннисян, Ретиф-де-ла Бретон**, "Ретиф-де-ла Бретон, *Южное открытие, произведенное летающим человеком, или французский Дедал*", М.-Л., 1936, ст. V-LVIII; նոյնի՝ *Генезис общественного идеала Фурье*, М.-Л., 1939; նոյնի՝ *Шарль Фурье*, Ер., 1941:

6 Տե՛ս, օրինակ, **В. М. Далин**, *Из истории социальной мысли во Франции*, М., 1984, ст. 6-8:

7 Երեւանի համալսարանի ղեկավարութեանը յղած 1931 թ. փետրուարի 10-ի թուակիր նամակում ակադեմիկոս Վոլգինը գրել է. «Ընկ. Աբգար Յովհաննիսեանն իմ ղեկավարութեամբ աշխատանքներ է իրականացնում XVIII դ. ֆրանսիական սոցիալիզմի ուսումնասիրութեան ասպարէզում: Գտնում եմ, որ այդ աշխատանքն ունի մեծ նշանակութիւն գիտական կոմունիզմի նախորդներին յայտնաբերելու եւ, հետեւաբար, սոցիալիստական գաղափարների զարգացման ընդհանուր հայեցակարգի մշակման համար: Այդ խնդրի իրականացման համար ընկ. Յովհաննիսեանը տիրապետում է բաւականաչափ գիտելիքների եւ ունի գիտաշխատողի արտասովոր ընդունակութիւններ»: Տե՛ս ՀՀ Ազգային արխիւ, ֆ. 1169, ց. 1, գ. 251, թ. 1:

8 **А. В. Ревякин**, *Федор Васильевич Потемкин* // Портреты историков. Время и судьбы, том 2. Всеобщая история, М., 2000, ст. 398.

9 **А. Р. Иоаннисян**, *Иосиф Эмин*, Ер., 1945; նոյնի՝ *Россия и армянское освободительное дви-жение в 80-х годах XVIII столетия*, Ер., 1947; նոյնի՝ *Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX века*, Ер., 1958.

10 Գիրքը բարձր գնահատականի է արժանացել թէ՛ խորհրդային պատմաբանների կողմից եւ թէ՛ արտերկրում: Տե՛ս **Б. Заходер**, "*Вопросы истории*", 1946, N 11-12, ст. 155-157; **Գ. Գիւզալեան**, *Հայրենիք*, 1949, թիւ 5, էջ 103-106:

© National Library of Armenia

հայկական ազատագրական շարժման նկատմամբ ունեցած դիրքորոշումը: Նշենք, որ Ա. Յովհաննիսեանի արխիւում նրա՝ Ռուսաստանը եւ հայկական ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թուականներին մենագրութեան մասին պահպանուել է ակադեմիկոս Տարլէի յիշարժան գնահատականը: Այս գրքի առնչութեամբ նրան յղած հակիրճ նամակում Ե. Տարլէն գրել է. «Հէնց նոր ստացայ Ռուսաստանը եւ հայկական ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թուականներին ձեր աշխատանքը: Արդէն հպանցիկ իսկ ծանօթութիւնը թողնում է շատ հետաքրքիր եւ պատկառելի հետազօտութեան տպաւորութիւն: Կը կարդամ այն անյապաղ. ես պէտք է շուտով մի գլուխ պատրաստեմ Վ. Զուբովի արշա-ւանքների եւ նրա նախորդ գործողու-թիւնների մասին»[11]:

Ուստի միանգամայն օրինաչափ է, որ, հաշուի առնելով դեռեւս երիտասարդ պատմաբանի արժանիքները, ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ ակադեմիկոս Վոլգինը 1947 թ. ՀՍՍՀ ԳԱ ակադեմիայի հերթական ընտրութիւնների կապակցութեամբ առաջադրել է նրա թեկնածութիւնն ակադեմիկոսի տեղի համար յայտարարուած մրցոյթին[12], որի արդիւնքում նա ընտրուել է ակադեմիայի անդամ:

Այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ հայկական ազատագրական շարժումների պատմութեանը նուիրուած նրա գրքերը ստալինեան վարչակարգի մայրամուտին բոլորի կողմից չեն արժանացել միանշանակօրէն դրական գնահատականների: Այդ մասին է վկայում Ա. Յովհաննիսեանի գրաւոր ելոյթներից մէկը: Մեզ անյայտ հանգամանքների բերումով, 1950 թ. նա գիտական մամուլում հարկադրաբար հանդէս է եկել ինքնաքննադատական յօդուածով եւ հրապարակաւ «ընդունել» իր հասցէին բարդուած տարբեր, իրականում ոչնչով չհիմնաւորուած քաղաքական «մեղադրանքներ»՝[13] ընդգծելով, մասնաւորապէս բուրժուական պատմագրութեան ազդեցութիւնն իր վրայ, որի նկատմամբ ինքն, իբր Ռուսաստանը եւ հայկական ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թուականներին գրքում քննադատական մօտեցում չի ցուցաբերել: Ելնելով Ա. Յովհաննիսեանի յօդուածից՝ կարելի է անտարակուսելի համարել, որ նրան մեղադրել են, մասնաւորապէս ադրբեջանական ժողովրդի պայքարը՝ թուրքական եւ պարսկական կեղեքիչների դէմ հայ եւ վրացի ժողովուրդների պայքարի ընդհանուր համատեքստում չընդգրկելու մէջ:

Մեր օրերի բարձունքից կարող է սոսկ զարմանք յարուցել նրա կողմից իրեն յանիրաւի վերագրուող մեղադրանքների ընդունման փաստը: Սակայն հարկ է հաշուի առնել, որ հակառակ պարագայում ստալինեան վարչակարգի ճիրաններում գտնուող պատմաբանը կարող էր արժանանալ կեանքի հետագայ տարիները քաղաքական բանտարկեալների համար նախատեսուած ստալինեան ճամբարներում անցկացնելու՝ իր գործընկերներից շատերի (Աշոտ Յովհաննիսեան, Վ. Դալին, Եակով Զախեր եւ այլք) դժխեմ ճակատագրին:

Չնայած այս հանգամանքին, հաշուի առնելով հայկական ազատագրական շարժումների պատմութեանը նուիրուած իր գրքերի գիտական կարեւորութիւնը՝ կեանքի վերջին տարիներին, հաւանաբար, կապուած նաեւ զարաբաղեան շարժման ծաւալման հետ, Ա. Յովհաննիսեանը նպատակայարմար գտաւ դրանք վերահրատարակել՝[14] դրանով իսկ, փաստօրէն, անվաւեր դարձնելով իր իսկ «ինքնաքննադատութիւնը», որին նա դիմել էր 1950-ական թուականներին ԽՍՀՄ-ում առկայ քաղաքական բիրտ մթնոլորտի թելադրանքով:

Եթէ Ա. Յովհաննիսեանի խորհրդային գործընկերների գերակշռող մասը բաւարարւում էր ԽՍՀՄ-ում գտնուող արխիւների ընձեռած հնարաւորութիւններով, ինչը եւ պայմանաւորել է խորհրդային պատմագրութեան առանձնայատկութիւններից մէկը, ապա, ի տարբերութիւն նրանց, նա 1960-ական թուականներից ի վեր հնարաւորութիւն է ունեցել պարբերաբար աշխատելու ֆրանսիական արխիւներում եւ գրադարաններում: Գործունէութեան այս երկրորդ փուլում է ամբողջ խորութեամբ դրսեւորուել Ա. Յովհաննիսեանի պատմագիտական վառ տաղանդը: 1960-80-ական թուականներին նա գրել է XVIII դարի վերջի եւ XIX դարի առաջին կէսի ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի պատմութեանը նուիրուած մեծարժէք աշխատութիւնների մի ամբողջ շարք (հինգ մենագրութիւն):

Գիտական գործունէութեան այս ժամանակահատուածում եւս Ա. Յովհաննիսեանը շարունակում էր իր ուշադրութեան կենտրոնում պահել այն ուտոպիստ կոմունիստներին, որոնց հայեացքների ուսումնասիրութեանն էին նուիրուած նրա առաջին աշխատութիւնները եւ, օգտագործելով ֆրանսիական արխիւներում ու գրադարաններում յայտնաբերած նորայայտ փաստաթղթերը, պարբերաբար անդրադառնում էր նրանց գործունէութեան եւ հայեացքների բարեշրջման անտեսուած կողմերին[15]: Այդուհանդերձ, կոմունիստական գաղափարախօսութեան պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում նրա հիմնական ներդրումը յանգում էր միանգամայն նոր դէմքերի եւ ըստ այդմ՝ Ֆրանսիայում ուտոպիական գաղափարախօսութեան առանձնայատկութիւնների բացայայտմանը եւ տարածման ուղիների յստակեցմանը[16]: Ֆրանսիական կենտրոնական եւ դեպարտամենտական տարբեր արխիւների եւ մամուլի նիւթերի բծախնդիր ուսումնասիրութեան հիման վրայ նա պատմաբանների սեփականութիւնն է դարձրել նրանց անյայտ՝ XVIII-XIX դարերում Ֆրանսիայում ուտոպիական կոմունիստական գաղափարախօսութեան մեծ թուով հետեւորդների (Գ. Բորիէ, Ժ.-Կ. Շապիւի, Մ. Կիւբեր, Ժ. Գրենիւ, Ռ.-Ֆ. Դեբոն եւ այլք), որոնց անունները մատնուած են եղել կա՛մ կատարեալ մոռացութեան, կա՛մ յայտնի են եղել միայն թէականօրէն: Այս առումով առաւել ցցուն օրինակը XVIII դարի Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակաշրջանում կոմունիստական մտքի զարգացման պատմութեանը նուիրուած նրա մենագրութիւնն է, որում ընթերցողի առջեւ յառնում է մինչ այդ անյայտ գործիչների մի ամբողջ համաստեղութիւն: Ֆրանսիական հասարակական մտքի պատմութեան խոշորագոյն մասնագէտներից մէկի՝ Վ. Դալինի համոզմամբ, Ա. Յովհաննիսեանի գիրքը գիտերի եւ յայտնագործութիւնների մի ամբողջ շղթայ է[17]:

Ձեռնպահ մնալով Ա. Յովհաննիսեանի՝ հասարակական մտքի պատմութեանն առնչուող պատկառելի գիտական ժառանգութեան քննական վերլուծութեան մէջ

11 Տե՛ս ՀՀ Ազգային արխիւ, ֆ. 1169, ց. 1, գ. 250, թ. 9-9 շրջ.:

12 Տե՛ս ՀՀ Ազգային արխիւ, ֆ. 1169, ց. 1, գ. 261, թ. 9-10:

13 **А. Р. Иоаннисян**, *По поводу моей книги "Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия"*- Տեղեկագիր. հասարակական գիտութիւններ, 1950, թիւ 4, էջ 83-88:

14 **А. Р. Иоаннисян**, *Иосиф Эмин*, Ер., 1989; նոյնի՝ *Россия и армянское освободительное дви-жение в 80-х годах XVIII столетия*, Ер., 1990.

15 **А. Р. Иоаннисян**, *Шарль Фурье*, М., 1958; նոյնի՝ *Коммунистические идеи в годы Великой французской революции*, ст. 178-248.

16 Տե՛ս մանրամասն **В. А. Дунаевский, Г. С. Кучеренко**, *նշ. աշխ.*, էջ 122-127:

17 **В. М. Далин**, *Историки Франции XIX-XX веков*, ст. 159.

© National Library of Armenia

խորամուխ լինելուց՝ բաւարարուենք ընդհանուր բնոյթի ամենաէական դիտարկումներով: Մասնաւորապէս՝ այս թեմայի պատմագրութեան մէջ նա առաջինն է բացայայտել կոմունիստական գաղափարախօսութեան յարատեւութիւնը Ֆրանսիայում նապոլէոնեան ամբողջատիրական վարչակարգի օրօք եւ Երկրորդ Ռեստաւրացիայի տարիներին[18]: Իսկ աւելի ուշ, պատմագիտութեան մէջ կիրառելով միանգամայն նոր մօտեցում՝ նա նաեւ առաջինն է XIX դարի 40-ական թուականների ուտոպիական կոմունիստական գաղափարների զարգացումը շաղկապել յեղափոխական բանուորական շարժումների պատմութեանը[19]: Դրանում է նրա վերջին աշխատութիւնների իւրայատկութիւնը:

Ա. Յովհաննիսեանը բազմիցս անդրադարձել է պատմաբանի համար խրթին՝ կենսագրական ժանրին: Նրա աշխատութիւնների կենտրոնում մշտապէս գտնւում էին մարդիկ, ընդ որում ոչ միայն պատմութեան առէջքներում խոր հետք թողած նշանաւոր գործիչներ, ինչպիսիք էին՝ Յ. Էմինը կամ Շ. Ֆուրիէն, այլեւ ճակատագրի դժխեմ հեգնանքով պատմութեան թատերաբեմից հեռու նետուած ուտոպիական գաղափարախօսութեան մեծամիտ՝ մինչ այդ անյայտ հետեւորդներ, որոնք, սակայն, նրա տքնաջան գիտական պրպտումների արդիւնքում դարձել են պատմագիտական հանրութեան սեփականութիւնը: Այս հանգամանքն, ի դէպ, Ա. Յովհաննիսեանին զանազանում է միեւնոյն ժանրին բազմիցս անդրադարձած նրա խորհրդային գործընկերներից՝ պատմական գործիչների դիմագծի ուրուագծման մեծ վարպետներից (Ա. Մանֆրեդ, Սերգէյ Ուտչենկո, Վլադիմիր Տրուխանովսկի եւ այլք), որոնց գրչին պատկանում են բացառապէս նշանաւոր պետական, քաղաքական եւ ռազմական գործիչների մեծարժէք կենսագրականներ: Միաժամանակ, հարկ է չանտեսել, որ այս ասպարէզում Ա. Յովհաննիսեանի եւ նրա գործընկերների միջեւ նկատելի է եւս մէկ զանազանութիւն: Այն է՝ նրա ուսումնասիրութիւնների յետնախորքի վրայ յառնում են տարբեր պատմական ժամանակաշրջաններում եւ տարածաշրջաններում, միաժամանակ նաեւ միմեանց հետ առնչութիւն չունեցող ասպարէզներում, ինչպիսիք են՝ XVIII դ. հայկական ազատագրական շարժումները, XIX դ. 40-ական թուականներին Ֆրանսիայում ծայր առած յեղափոխական պայքարը, տեսական մտորումները, իրենց գործունէութիւնը ծաւալած գործիչներ, որոնց, այդուհանդերձ, միաւորող միակ հանգամանքը եղել է պատմաբանի մեծ վարպետութիւնը:

Ինչպէս եւ իր սերնդակիցների, անկախ քաղաքացիութիւնից եւ ազգային պատկանելիութիւնից, գերակշռող մասը, Ա. Յովհաննիսեանը պրոֆեսիոնալ պատմաբան էր, որը, չնայած միջազգային լայն ճանաչմանը, իր՝ իբրեւ պատմաբանի մասին ունէր, այդուհանդերձ, համեստ կարծիք: XX դ. երկրորդ կէսին բարձր զարգացման մակարդակի հասած պատմական գիտութեան ասպարէզում պրոֆեսիոնալ պատմաբաններն ուժերը փորձարկել են կա՛մ միայն մէկ թեմայի շրջանակներում, կա՛մ առաւելագոյնը սահմանափակուել երկու տարբեր թեմաների ուսումնասիրութեամբ: 1920-ական թթ. խորհրդային պատմագիտական հնոցում թրծուած պատմաբանների մեծ մասը որդեգրել էր երկրորդ տարբերակը, ինչը, մեր կարծիքով, աւելի նախընտրելի է: Դա պայմանաւորուած էր խորհրդային պատմաբանների

18 **А. Р. Иоаннисян**, *К истории французского утопического коммунизма первой половины XIX века*, М., 1981.

19 **А. Р. Иоаннисян**, *Революционно-коммунистическое движение во Франции в 1840-1841 гг.*, Москва, 1983; նոյնի՝ *Революционно-коммунистическое движение во Франции в 1842-1847 гг.*, Москва, 1986; նոյնի՝ *Революция 1848 года во Фран-ции и коммунизм*, М., 1989.

առաջին սերնդի ներկայացուցիչների՝ Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում ստացած չորսամեայ ուսումնառութեան առանձնայատկութիւններով, որի ընթացքում նրանք իւրաքանչիւր տարի մասնակցել են երկու տարբեր թեմաների նուիրուած սեմինարների աշխատանքներին՝ հանգամանք, որը եւ նախանշել է նրանց գիտական հետագայ հետազօտութիւնների ուղեծրերը[20]: Ա. Յովհաննիսեանը եւս, ինչպէս իր սերնդակիցները, ժամանակի ոգուն համահունչ, ընտրել է երկու տարբեր պատմագիտական ոլորտներ՝ որեւէ ցանկութիւն իսկ երբեւէ չդրսեւորելով հատելու դրանց շրջանակները:

Նոյնիսկ այս պայմաններում, սակայն, նա, ինչպէս եւ բոլոր պրոֆեսիոնալ պատմաբանները, իր մասին արտայայտւում էր բացառապէս ծայրայեղ անհրաժեշտութեան դէպքում եւ խիստ զուսպ ձեւով: Այսպէս, պատմաբանը, որի անունը վաղուց ի վեր քաջ յայտնի էր միջազգային ասպարէզում, 1975 թ. դեկտեմբերին անձնական զրոյցում իր մասին յայտնեց հետեւեալ կարծիքը. «Իմ մասին ասում են, թէ ես Ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան մասնագէտ եմ: Դա այդպէս չէ, եթէ դուք ընթերցէք իմ գիրքը, Ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան մասին այնտեղ ոչինչ չէք գտնի: Ես միայն գաղափարների պատմութեան մասնագէտ եմ»: Տարիներ անց նեղ մասնագիտական շրջանակներում Ֆրանսիայի պատմութեան տարբեր մասնագէտներ նրա մասին յայտնում էին միեւնոյն կարծիքը՝ նրան ընկալելով միայն իբրեւ Ֆրանսիական հասարակական մտքի պատմութեան խոշորագոյն մասնագէտի: Նշենք, ի դէպ, որ տարբեր առիթներով թէ՛ իրենց եւ թէ՛ իրենց գործընկերների մասին համահունչ կարծիքներ են յայտնել Ա. Յովհաննիսեանի գործընկերներից շատերը, այդ թւում՝ համաշխարհային ճանաչում ունեցող պատմաբաններ, ինչպիսիք էին՝ Ալբեր Սոբուլը, Վ. Դալինը, Մ. Ներսիսեանը, Անատոլի Ադոն եւ այլք:

Ա. Յովհաննիսեանի դեռեւս առաջին աշխատութիւններն անսքող բացայայտում են նրա գիտական գործունէութեանը բնորոշ հիմնական առանձնայատկութիւններից մէկը, այն է՝ անկախ նոր մեթոդոլոգիական հիմունքներ կիրառելու հանգամանքից, նա ի սկզբանէ ձեռնամուխ է եղել պատմագիտական դեռեւս չհետազօտուած կամ խիստ նուազ հետազօտուած թեմաների ուսումնասիրութեանը: Այս հարցը, սակայն, կարիք ունի որոշ մեկնաբանութիւնների: Ա. Յովհաննիսեանը, անհրաժեշտութեան դէպքում իր տարբեր գրքերի առաջաբաններում բարեխղճօրէն մատնանշում էր այն սակաւաթիւ պատմաբանների անունները, որոնք մինչ այդ այս կամ այն չափով իրենց աւանդն էին ներդրել նրա կողմից ուսումնասիրուող թեմաների հետազօտութեան ասպարէզում: Այդուհանդերձ, նա համեստօրէն ձեռնպահ էր մնում նախորդների եւ իր աշխատութիւնների միջեւ առկայ էական տարբերութիւնները մանրամասնելուց՝ թողնելով այդ խնդրի մեկնաբանումն ընթերցողների հայեցողութեանը: Փոխարէնը, անհրաժեշտութեան դէպքում նա չէր վարանում մատնանշել իր նախորդ գրքերում տեղ գտած անճշտութիւնները[21]:

Մեր կողմից նշենք, որ եթէ Ա. Յովհաննիսեանի սակաւաթիւ նախորդներ երբեմն անդրադարձել էին նրա կողմից քննարկուող ուտոպիական կոմունիստական գաղափարների պատմութեան հիմնա-

20 Տե՛ս, օրինակ, **В. М. Далин**, *С. С. Бантке — историк* // Памяти С. С. Бантке. (Из истории революционного движения в Бессарабии), Кишинев, 1970, ст. 58-59:

21 Տե՛ս, օրինակ, **А. Р. Иоаннисян**, *Революционно-коммунистическое движение во Франции в 1840-1841 гг.*, ст. 10:

© National Library of Armenia

հարցերի որոշ կողմերի, ապա իրենց առջեւ ծառացած խնդիրներին լուծում էին տուել բաւականին սահմանափակ կտրուածքով եւ ցածր մակարդակով, իսկ ինչն առաւելեալն է, առանց արխիւային փաստաթղթերի ուսումնասիրութեան: Ըստ այդմ՝ Ֆրանսիական ուտոպիական գաղափարախօսութեան պատմութեան տարբեր հիմնախնդիրներին նուիրուած նրա ուսումնասիրութիւնները հարկ է անվարանօրէն համարել նորարարական:

Այս առնչութեամբ մանրամասնենք մէկ այլ հանգամանք եւս. Ա. Յովհաննիսեանի սակաւաթիւ նախորդների թւում երբեմն եղել են նաեւ անուանի պատմաբաններ: Նրանց թւում յիշատակենք նապոլէոնագիտութեան մեծ երախտաւորներ Ալբեր Վանդալի եւ Էդուարդ Դրիոյի անունները, որոնցից երկրորդը մեծ աւանդունի նապոլէոնեան կայսրութեան արեւելեան քաղաքականութեան ուսումնասիրութեան բնագաւառում[22]: Այս ասպարէզում, սակայն, Ա. Յովհաննիսեանի ցուցաբերած մօտեցումն, այդուհանդերձ, ինքնատիպ էր, քանզի յայտնի իրաղարձութիւններին տուած նրա գնահատականները տրամագծօրէն զանազանւում էին Ֆրանսիացի պատմաբանների (Ա. Վանդալ եւ այլք) մեկնաբանութիւններից, օրինակ, նապոլէոնեան դիւանագիտութեան հակառուսական քաղաքականութեան դիմագծի անսքող բացայայտման հարցում թէ՛ մինչեւ 1807 թ. Տիլզիտի հաշտութեան կայացումը եւ թէ՛ մասնաւորապէս դրանից յետոյ[23]: Բացի դրանից, գիտական շրջանառութեան մէջ դնելով արտասահմանեան պատմաբանների, այդ թւում՝ իր նշանաւոր նախորդի՝ Է. Դրիոյի համար անմատչելի մեծ թւով հայերէն եւ ռուսերէն սկզբնաղբիւրներ՝ նա յայտարարում մեծապէս նպաստել է միջազգային յարաբերութիւնների պատմութեան շուրջ շատ աւելի ամբողջական պատկերացումների ձեւաւորմանը: Արդիւնքում՝ նա մեկնաբանել է ոչ միայն Արեւելքում գերիշխող ազդեցութեան հաստատման նպատակ հետապնդող Անգլիայի եւ նապոլէոնեան Ֆրանսիայի անզիջում պայքարը, այլեւ, փաստօրէն, առաջինն է գիտականօրէն հիմնաւորել եւրոպական գերտէրութիւնների ղեկավար շրջանակների մեքենայութիւնները, որոնք միտուած էին Ռուսաստանին՝ Այսրկովկասի միացման խոչընդոտմանը:

Հարկ է մեկնաբանել, այդուհանդերձ, որ որոշ սկզբունքային հարցերում Ա. Յովհաննիսեանն, իբրեւ պատմաբան, զանազանւում էր իր խորհրդային սերնդակիցներից: Խօսքը մասնաւորապէս վերաբերում է նրա գործընկերների գերակշռող մասի՝ ոչ մարքսիստ պատմաբանների առաջադրած մարքսիստական մեթոդոլոգիային անյարիր հայեցակարգային նոր մօտեցումների նկատմամբ անբարեացակամ տրամադրուածութեանը, ինչը պայմանաւորուած էր նրանց պատմագիտական դաստիարակութեամբ եւ բացայայտօրէն իրեն զգալ էր տալիս մինչեւ նրանց կեանքի վերջին օրերը: Ա. Յովհաննիսեանի դիրքորոշումն այս հարցում փոքր-ինչ այլ էր: ԽՍՀՄ-ում պատմական գիտութեան խիստ քաղաքականացուածութեան պայմաններում, ինչը ցայտունօրէն դրսեւորուել է նաեւ 1960-70-ական թուականներին, խորհրդային պատմաբանները, հիմնուելով մարքսիզմ-լենինիզմի դասականների տեսական դրոյթների վրայ, դատափետել են եւ կտրականապէս մերժել ոչ միայն արտասահմանեան պատմաբանների՝ մարքսիզմին անյարիր, այլեւ նոյնիսկ 1960-ական թուականներին սակաւաթիւ խորհրդային պատմաբանների, մարքսիստական մեթոդոլոգիայի շրջանակում, Ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան մասնաւոր հարցերի շուրջ առաջադրած, սակայն խորհրդային պատմագրութեան ասպարէզում ինքնահաստատում գտած տեսակէտներից շեղուող մեկնաբանութիւնները: Ա. Յովհաննիսեանը, սակայն, նման բանավէճերի երբեւէ չի մասնակցել: 1970 թ. ԽՍՀՄ ԳԱ Համընդհանուր պատմութեան ինստիտուտի ղեկավարութիւնը միջազգային պատմագիտական թատերաբեմում վաղուց ի վեր մեծ հեղինակութիւն վայելող պատմաբանին պաշտօնապէս հրաւիրել է մասնակցելու եակոբինեան դիկտատուրայի դասակարգային էութեանն առնչուող խնդիրներին նուիրուած քննարկումին[24]: Գիտակցելով, սակայն, առաջիկայ բանավէճի գերքաղաքականացուած բնոյթը՝[25] նա, ամենայն հաւանականութեամբ, այդ իսկ պատճառով է խուսափել դրան մասնակցելուց:

Տողերիս հեղինակն այս մասին կարող է դատել՝ նաեւ ելնելով Ա. Յովհաննիսեանի հետ ունեցած անձնական շփումներից: Մի առիթով նա անդրադարձաւ XVIII դարի Ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան խոշորագոյն պատմաբաններից մէկի՝ Ժակ Գոդշոյի (Ֆրանսիա)՝ 1950-ական թուականներին առաջադրած ատլանտեան յեղափոխութեան տեսութեանը, որը միտուած էր 1949 թ. ձեւաւորուած Հիւսիսատլանտեան դաշինքի հիմնաւորմանը: Ըստ այս տեսութեան՝ Ֆրանսիական յեղափոխութիւնը հարկ է ընդգրկել XVIII դարի երկրորդ կէսին եւ XIX դարի սկզբին ամերիկեան եւ եւրոպական մայրցամաքներում բռնկուած բուրժուական յեղափոխութիւնների ընդհանուր շղթայում եւ այն դիտել իբրեւ դրա բաղկացուցիչ մաս: Արեւմտեան բուրժուական յեղափոխութիւնների պատմութեան մարքսիստական ընկալումից եւ մեկնաբանումից ամբողջութեամբ շեղուող այս տեսութեան նկատմամբ, որն, ի դէպ, արժանացել էր Ա. Յովհաննիսեանի գործընկերներից շատերի՝ խորհրդային եւ արտասահմանեան մարքսիստ պատմաբանների (Ա. Մանֆրեդ, Ա. Սոբուլ եւ այլք) անողոք քննադատութեանը, նա ցուցաբերում էր շատ աւելի հանդուրժողական վերաբերմունք: Այս առիթով, նա մեղմ ձայնով յայտնեց իր չափաւոր եւ, ըստ իս, շատ աւելի ընդունելի կարծիքը. «Եթէ Գոդշոն այդ տեսութիւնն ատլանտեան չանուանէր, այն իր շուրջ նման աղմուկ չէր վեր հանի»:

Ա. Յովհաննիսեանին բնորոշ առանձնայատկութիւններից էր ստեղծագործական ուժերի կենտրոնացումը գլխաւորապէս մենագրութիւնների վրայ: Քաջ գիտակցելով, որ ապրելու են գրքերը եւ ոչ թէ յօդուածները՝ մի առիթով նա պարզորոշ յայտնեց իր կարծիքը. «Ես յօդուածներ գրել չեմ սիրում»: Այստեղ, անկասկած, նշանակութիւն ունէր նաեւ այն հանգամանքը, որ նա, ինչպէս եւ իւրաքանչիւր խորհրդային պատմաբան, միանգամայն իրաւամբ դժգոհում էր ԽՍՀՄ-ում հրատարակուող պատմագիտական պարբերական-

22 **E. Driault**, *La politique orientale de Napoléon. Sébastiani et Gardane (1806-1808)*, Paris, 1904.

23 Ցաւօք, ռուսերէնի չիմացութեան պատճառով նրա գրքին անտեղեակ արտասահմանեան պատմաբաններից ոմանք 1990-ական թուականներին եւս իրենց ֆրանսիացի նախորդների հետքերով այս հարցը քննարկել են, առանց հաշուի առնելու Ա. Յովհաննիսեանի իրատեսական մեկնաբանութիւնները: Տե՛ս, օրինակ, **I. Amini**, *Napoléon et la Perse*, Paris, 1995:

24 Նրա արխիւում պահպանուել է ԽՍՀՄ ԳԱ Համընդհանուր պատմութեան ինստիտուտի՝ 1970 թ. ապրիլի 21-ի թուակիր պաշտօնական հրաւէրը. ՀՀ Ազգային արխիւ, ֆ. 1169, ց. 1, գ. 257, թ. 30:

25 *Проблемы якобинской диктатуры. Симпозиум в секторе истории Франции Института всеобщей истории АН СССР 20-21 мая 1970 г.*, "Французский ежегодник", 1970, М., 1972, ст. 272-313. Այդ մասին մանրամասն տե՛ս **С. Е. Летчфорд**, *В. Г. Ревуненков против «московской школы»: дискуссия о якобинской диктатуре*, "Французский ежегодник", 2002, М., 2002, ст. 207-222; **А. В. Чуднов**, *Размышления о скры-тых смыслах дискуссии по проблемам якобинской диктатуры (60-е–80-е годы XX в.)*, "Французский ежегодник", 2007, М., 2007, ст. 256-265.

© National Library of Armenia

ների (ի տարբերութիւն ֆրանսիական պարբերականների) խմբագրութիւնների կողմից յաճախ արուող անպատեհ շտկումներից կամ անհարկի կրճատումներից, որոնք, ըստ էութեան, կատարւում էին, առանց հեղինակի կարծիքը հաշուի առնելու: Ամէն դէպքում, անժխտելի է նաեւ այն, որ նա հակուած չէր ուժերի ցրմանը: Յիշում եմ, թէ ինչպէս 1982 թ. նա դիւանագիտօրէն մերժեց Ֆրանսիական տարեգրքի ղեկավարութեան՝ իր Յեղափոխական-կոմունիստական շարժումը Ֆրանսիայում 1840-1841 թթ.՝ դեռեւս ձեռագիր մենագրութեան գլուխներից մէկը յօդուածի ձեւով տպագրութեան ներկայացնելուն վերաբերող առաջարկը[26]:

Ի տարբերութիւն խորհրդային եւ արտասահմանեան իր գործընկերներից շատերի (Ա. Մանֆրեդ, Վ. Դալին, Ժ. Գոդշո եւ այլք), Ա. Յովհաննիսեանը երբեւէ ցանկութիւն չի դրսեւորել անդրադառնալու իր նախորդների գիտական ժառանգութեան քննական վերլուծութեանը: Գրեթէ միեւնոյն վերաբերմունքն էր նա ցուցաբերում իր ժամանակակից պատմաբանների աշխատութիւնների նկատմամբ՝ ձեռնպահ մնալով նոյնիսկ գրախօսականների միջոցով պատմագիտական մտքի նորագոյն նուաճումների արժեւորումից: Ա. Յովհաննիսեանը գիտական երկարամեայ գործունէութեան ընթացքում գրախօսել է սոսկ մի քանի գիտական հրատարակութիւններ: Համեմատութեան կարգով նշենք, որ նրա սերնդակից Ժ. Գոդշոյի գրչին պատկանում է աւելի քան հազար գրախօսութիւն:

Եթէ Ա. Յովհաննիսեանի գործընկերներից ոմանց (Ա. Մանֆրեդ, Վ. Դալին, Վ. Տրուխանովսկի, Սերգեյ Տիխուինսկի, Գրիգորի Սեւոստեանով, Մ. Ներսիսեան) գիտական գործունէութեան մէջ պատկառելի տեղ էր զբաղեցնում խմբագրական աշխատանքը, ապա նոյնը չի կարելի ասել նրա մասին: Նա խմբագրել է մի քանի գիրք[27], ընդգրկուել սակաւաթիւ պատմագիտական հրատարակութիւնների խմբագրական յանձնախմբերի կազմում[28], այդ թւում՝ գլխաւորել Գրական յուշարձաններ մատենաշարի խմբագրական յանձնախումբը: Ըստ Մ. Ներսիսեանի վկայութեան՝ Ա. Յովհաննիսեանը պարբերաբար մերժել է նաեւ Պատմա-բանասիրական հանդէսի խմբագրական յանձնախմբում ընդգրկուելու իր առաջարկը:

Փոխարէնը, Ա. Յովհաննիսեանը չի զլացել զբաղուելու մանկավարժական եւ վարչական աշխատանքներով: 1931-1960 թթ. նա դասաւանդել է Երեւանի պետական համալսարանում, 1938-1960 թթ.՝ եղել նոր դարի պատմութեան ամբիոնի վարիչ, իսկ 1938-1947 թթ.՝ պրոռեկտոր: Լինելով գիտութեան մեծ կազմակերպիչ՝ նա շուրջ չորս տասնամեակ ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտութիւնների բաժանմունքում զբաղեցրել է ղեկավար բարձր պաշտօններ՝ պատմութեան ինստիտուտի տնօրէնի (1947-1953), ակադեմիկոս-քարտուղարի (1949-1960), փոխնախագահի (1960-1963, 1967-1986) եւ այլն: Նրա անմիջական ջանքերի շնորհիւ սերտ կապեր հաստատուեցին Հայաստանի եւ Հունգարիայի գիտութիւնե-

26 Նրա արխիւում պահպանուել են միութենական տարբեր հեղինակաւոր պատմագիտական հրատարակութիւնների կողմից արուած՝ յօդուածներ գրելուն առնչուող բազմաթիւ առաջարկներ, որոնց նա դրականօրէն չի արձագանգել:

27 Հայ ժողովրդի պատմութիւն, առաջին մաս, Եր., 1951. *История армянского народа*, Ер., 1951; *Երեւանի խանութիւնը XVIII դարի վերջում (1780-1800)*, Եր., 1958

28 *Всемирная история*, том VI, М., 1959; **В. П. Волгин**, *Очерки истории социалистических идей. С древности до конца XVIII в.*, М., 1975; նոյնի՝ *Очерки истории социалистических идей. Первая половина XIX в.*, М., 1976; նոյնի՝ *Развитие общественной мысли во Франции в XVIII веке*, М., 1977; նոյնի՝ *Французский утопический коммунизм*, М., 1979; նոյնի՝ *Статьи и выступления*, М., 1979.

րի ակադեմիաների միջեւ, որի արդիւնքում երկու հաստատութիւնների պատմաբանների մասնակցութեամբ հրատարակուեց յօդուածների արժէքաւոր մի ժողովածոյ՝ նուիրուած հայ-հունգարական առնչութիւնների պատմութեանը[29]:

Այդուհանդերձ, Ա. Յովհաննիսեանը հակուած չէր թմբկահարելու իր յաջողութիւնները, թէեւ դրա համար ունէր լայն հնարաւորութիւններ: Իր ծննդեան 70-ամեակի առնչութեամբ, 1978 թ. մարտի 6-ի թուակիր նամակով նա դիմել է ՀԽՍՀ ԳԱ նախագահ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանին խնդրանքով՝ ձեռնպահ մնալու իր յոբելեանը նշելու հետ կապուած միջոցառումների կազմակերպումից. «Ես չեմ ցանկանում, որ իմ մասին մամուլում որեւէ յօդուածներ կամ նշումներ տպագրուեն: Մի խօսքով՝ ես, իրօք որ, ոչ միայն անկեղծօրէն չեմ ցանկանում, որ իմ եօթանասունամեակն այս կամ այն ձեւով նշուի, այլեւ նոյնիսկ յիշատակուի»[30]: Ա. Յովհաննիսեանը, յիրաւի, չէր ողջունում իր յոբելեանների առիթով յօդուածների լոյս ընծայումը: Նրա ծննդեան 75-ամեակի կապակցութեամբ ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների ամսագրում, առանց նրա գիտութեան, տպագրուած յօդուածի[31] առնչութեամբ, ըստ դրա հեղինակներից մէկի՝ Վ. Դալինի վկայութեան, նա վերջինիս յայտնել է սոսկ իր դժգոհութիւնն ու վրդովմունքը:

Ինչ վերաբերում է Ա. Յովհաննիսեանի անհատականութեանը, ապա անհրաժեշտ ենք համարում ուշադրութիւնը հրաւիրել նրա բարձր ինտելեկտի վրայ: Բաւարարուենք մէկ օրինակով: 1977 թ. մայիսին դեռեւս Երեւանի պետական համալսարանի 5-րդ կուրսի ուսանող տողերիս հեղինակին զանգահարեց նրա՝ ԳԱ փոխնախագահի քարտուղարուհին եւ ասաց. «Աբգար Ռուբէնովիչը Ձեզնից ներողութիւն է խնդրում, նա Ձեզ այսօր ընդունել չի կարող»:

Ա. Յովհաննիսեանի ծառայութիւններն, անտարակոյս, գնահատուել են խորհրդային իշխանութեան կողմից: Ինչպէս նշեցինք, նա զբաղեցրել է բարձր ակադեմիական պաշտօններ, արժանացել նաեւ տարբեր շքանշանների ու մեդալների: Թերեւս այս պատճառներով շատերը Հայաստանում նրան դասում են գնահատուած պատմաբանների շարքում: Որոշակի չափով դա, յիրաւի, այդպէս է: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ Ա. Յովհաննիսեանն, այդուհանդերձ, հայրենական այն պատմաբաններից էր, որի գիտական գործունէութեան շառաւիղները հատում էին նեղ ազգային եւ հանրապետական շրջանակները: Ուստի մեզ իրաւասու ենք համարում այս հարցը քննարկել աւելի լայն յենքի վրայ:

Պատմաբանները ոչ միայն տարբեր գիտական հետաքրքրութիւններ ունեն, այլեւ յաճախ անյարիր մօտեցումներ առօրէական, այդ թւում՝ ակադեմիական խնդիրների նկատմամբ: Ըստ այդմ՝ ցանկանում ենք մանրամասնել պատմագիտական իրականութեանը բնորոշ ցաւոտ մի իրողութիւն: Խորհրդային անուանի պատմաբանների, որոնց թւում Ա. Յովհաննիսեանի գործընկերներից շատերի դիրքորոշումները ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս ընտրուելու հարցում եղել են անհամատեղելի: Նրանցից ոմանց (Վ. Դալին, Նիկոլայ Մոլչանով, Եֆիմ Զերնեակ եւ այլք) այս հարցն ամենեւին չէր մտահոգում: Փոխարէնը, շատերը (Բ. Պորշնեւ, Ա. Մանֆրեդ, Ս. Ուտչենկո, Միխաիլ Բարգ եւ այլք), հա-

29 Հայ-հունգարական պատմական եւ մշակութային կապերի պատմութիւնից, Եր., 1983

30 ՀՀ Ազգային արխիւ, ֆ. 1169, ց. 1, գ. 249, թ. 1

31 **В. Далин, В. Микаелян**, *Выдающийся историк и крупный организатор науки*, "Вестник общественных наук" АН Армянской ССР, 1983, N 6, ст. 99-103.

© National Library of Armenia

շուի առնելով իրենց մեծ աւանդը պատմագիտութեան զարգացման այս կամ այն բնագաւառում, ցանկութիւն են դրսեւորել ընտրուելու ԽՍՀՄ ԳԱ անդամ:

Ա. Յովհաննիսեանը, ունենալով դրա համար պատմագիտական բոլոր իրաւասութիւնները, վերջինների թւում էր: Ճակատագրի քմահաճ հեգնանքով, սակայն, նրա, ինչպէս նաեւ նրա գործընկերներից շատերի, որոնց համբաւը վաղուց ի վեր դուրս էր եկել ԽՍՀՄ սահմաններից, իսկ վաստակը՝ յաւուր պատշաճի արժեւորուել տարբեր երկրներում՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոսների թւում ընդգրկուելու մտադրութիւնը մնաց սոսկ ցանկութիւնների հարթութեան վրայ: Խորհրդային ակադեմիայի ակադեմիկոսների գերակշռող մասը գիտութեան հետ հեռաւոր առնչութիւն չունեցող պատճառներով յամառօրէն եւ հետեւողականօրէն ընդդիմանում էր նրանց ընտրութեանը:

1964-1984 թթ. Ա. Յովհաննիսեանը բազմիցս մասնակցել է ԽՍՀՄ ԳԱ ընտրութիւններին, յաւակնել թէ՛ ակադեմիայի թղթակից-անդամի եւ թէ՛ ակադեմիկոսի տեղերին, սակայն մրցապայքարից միշտ դուրս է մնացել ընտրութիւնների առաջին իսկ փուլից յետոյ: Նրա՝ միմեանց յաջորդած անյաջողութիւնների պարագայում կային, մեզ յայտնի, երկու անբարենպաստ պատճառներ: Լինելով խիստ զուսպ անձնաւորութիւն՝ նա երբեւէ ի դերեւ չէր բերում իր յոյզերը, առաւել եւս նման նուրբ հարցերի կապակցութեամբ: Մի առիթով, սակայն, 1990 թ., որքան դա տարօրինակ էր եւ անհաւանական, Ա. Յովհաննիսեանն, այդուհանդերձ, տողերիս հեղինակին մատուցեց անակնկալ՝ հարեւանցիօրէն ակնարկելով իր ազգային պատկանելիութեան՝ իբրեւ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս ընտրուելուն խոչընդոտող հանգամանքի փաստը: Զրոյցի ընթացքում նա յղեց ԽՍՀՄ ԳԱ Համընդհանուր պատմութեան ինստիտուտի տնօրէն Ալեքսանդր Զուբարեանի օրինակը. «Կայ չգրուած մի օրէնք՝ բոլորը պէտք է ռուս լինեն: Տեսնո՞ւմ էք, թէ Զուբարեանը որքան գրքեր ունի եւ լաւ գրքեր, բայց նրան եւս չեն ընտրում ակադեմիայի անդամ» (վերջինս, այնուամենայնիւ, մեծ ուշացումով ընտրուեց ՌԴ ԳԱ անդամ): Ա. Յովհաննիսեանին լաւ ճանաչող անձանց համար դժուար չի լինի, անշուշտ, կռահելը, թէ ինչ չափերի էր հասնում նրա անձնական վիրաւորանքը, ինչը թաքցնելն արդէն անզօր էր նոյնիսկ նրա անսասան կամքի եւ մեծ հաւասարակշռուածութեան տէր անձնաւորութիւնը: Տասնհինգ տարի տեւած գիտական մեր շփումների ընթացքում սա միակ դէպքն էր, երբ նա քօղարկուած ձեւով յայտնեց իր դժգոհութիւնն այն կացութեան առնչութեամբ, որում գտնւում էր:

Ինչ վերաբերում է երկրորդ հիմնական պատճառին, ապա այն 1981 թ. դեկտեմբերին տողերիս հեղինակի հետ ունեցած զրոյցի ընթացքում մեկնաբանեց ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկին ԽՍՀՄ ԳԱ հերթական ընտրութիւններից անմիջապէս յետոյ: Խիստ վրդովուած ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոսների գերակշռող մասի՝ Ա. Յովհաննիսեանի հանդէպ այս անգամ եւս ցուցաբերած բացայայտ կողմնակալ վերաբերմունքի առիթով, որը նրան մեծապէս յուզել էր՝ նա կսկիծով յայտնեց նրանց դիրքորոշման վրայ լոյս սփռող մի մանրամասն: Ըստ Բ. Պիոտրովսկու խօսքերի՝ քուէարկութիւնից առաջ տեղի ունեցած մտքերի փոխանակութեան ընթացքում ակադեմիկոսներից ոմանք Ա. Յովհաննիսեանի ընտրութեան առնչութեամբ բացայայտօրէն յայտնել էին իրենց ժխտողական վերաբերմունքը՝ այն պատճառաբանելով վերջինիս բնակութեան վայրով. «Իսկ ինչո՞վ է նա մեզ օժանդակելու մեր աշխատանքներում»: Անկողմնակալ լինելու համար հարկ ենք համարում, այդուհանդերձ, նկատել, որ բացի Բ. Պիոտրովսկուց, ԽՍՀՄ ԳԱ տարբեր ընտրութիւնների ժամանակ նրան պարբերաբար սատարել են նաեւ այլ ակադեմիկոսներ, մասնաւորապէս՝ Միլիցա Նեչկինան եւ Ս. Տիխոնիրովին, որոնց ջանքերը, սակայն, շօշափելի արդիւնքի չեն յանգեցրել:

Ինչպէս տեսնում ենք, Ա. Յովհաննիսեանի՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս չընտրուելու հանգամանքը հեռաւոր իսկ առնչութիւն չի ունեցել նրա գիտական անուրանալի վաստակի թերագնահատման հետ, քանզի նման հարց երբեւէ նոյնիսկ չի քննարկուել: Ուստի մենք հակուած ենք հաւաստելու, որ նրա բեղմնաւոր գիտական գործունէութիւնը, ինչպէս նաեւ խորհրդային ու համաշխարհային պատմագրութեան ասպարէզում ներդրած մեծ աւանդը խորհրդային ակադեմիան ըստ արժանւոյն չի գնահատել:

Պատմագիտական իրականութեանը խիստ ընորոշ է եւս մէկ դառն օրինաչափութիւն. մեծ պատմաբանների գերակշռող մասի ժամանակակիցներից շատերը նրանց կենդանութեան օրօք նոյնիսկ չեն գիտակցել, թէ գիտութեան ինչպիսի տաղանդաւոր մշակների հետ է իրենց վիճակուած եղել համագործակցելու: Իրենց նախորդներին նուիրուած թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր ելոյթներում այս ցաւալի փաստը հաւաստել են շատերը[32]: Այս առումով, սակայն, Ա. Յովհաննիսեանը, մեր կարծիքով, եզակի յաջողակ պատմաբաններից էր եւ ճակատագրից դժգոհելու ոչինչ չունէր, քանզի նրա կենդանութեան օրօք կարծիքը նրա՝ իբրեւ մեծ պատմաբանի մասին միանշանակ էր: Անկախ սերունդների տարբերութեան հանգամանքից, Արեւմտեան Եւրոպայի պատմութեան ուսումնասիրողների համար նա անառարկելի եւ անվերապահ հեղինակութիւն էր:

1991 թ. դեկտեմբերին վրայ հասած նրա վախճանից յետոյ անցել են երկար տարիներ: Այսօր արդէն կենդանի չեն նրա սերնդակիցները՝ թէ՛ բարեկամները, թէ՛ գործընկերները եւ թէ՛ հակառակորդները: Ժամանակակիցներից ոմանց մօտ նրա հանդէպ արմատացած անձնաւորուած, կողմնակալ վերաբերմունքը եւս մնացել է անցեալի գրկում: Պատմաբանի համար ամենաանողոք եւ միաժամանակ միակ անկողմնակալ դատաւորը ժամանակի քննութիւնն է, որին դիմակայում են սոսկ նրա գրչին պատկանող մնայուն գիտական ուսումնասիրութիւնները: Ա. Յովհաննիսեանի մենագրութիւնները, որոնց վրայ չի տարածւում վաղեմութեան օրէնքը, նրա մտերիմ գործընկերներից Ա. Մանֆրեդի եւ Վ. Դալինի՝ միեւնոյն ժամանակաշրջանի Ֆրանսիայի պատմութեանը նուիրուած մեծարժէք գրքերի հետ մէկտեղ շարունակում են ապրել: Նրա գրքերը, որոնց վիճակուած է երկար կեանք, յղում են թէ՛ Ֆրանսիայի եւ թէ՛ հայ ժողովրդի պատմութեան մասնագէտները, այդ թւում՝ նրա հետ երբեւէ անձնական շփումներ չունեցած պատմաբանների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները՝ դրանով իսկ անմար պահելով ականաւոր պատմաբանի յիշատակը պատմական գիտութեան տատասկոտ քառուղիներում:

Աբգար Յովհաննիսեանի՝ իբրեւ պատմաբանի համառօտ, սակայն, ընդգրկուն գնահատականը դեռեւս 1975 թ. յուլիսին Էրմիտաժի իր աշխատասենեակում անձնական զրոյցի ընթացքում տուեց ակադեմիկոս Պիոտրովսկին. «Աբգար Ռուբէնովիչը խորհրդային ակադեմիայի զարդն է»: Նրա անունն, անտարակոյս, իբրեւ այդպիսին, կը զրոշմուի պատմաբանների գալիք սերունդների կոլեկտիւ մտածողութեան մէջ:

32 Տե՛ս, օրինակ, **М. А. Барг**, *Владимир Михайлович Лавровский.* // Портреты историков. Время и судьбы, том 2. Всеобщая история, ст. 227:

© National Library of Armenia